ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՆՈՐ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

1. Խ. Աբովյանի սույն քերականական աշխատությունը[1], որը գրված է ժամանակի գրաբարով, ռուսերենի և հայերենի զուգադրական հետազոտության կարևոր աղբյուր է։ Նրանում արծարծվող հարցերը քննության են ենթարկվում տեսականի և գործնականի սերտ միահյուսմամբ։ Աշխատությունն ամբողջովին ունի ռուսերենի տեսական վերլուծության բնույթ և հետապնդում է վերջինիս գործնական ուսուցման նպատակ։ Քերականությունը մեզանում ունեցել է որոշակի նշանակություն ռուսերենի ուսումնասիրության, ռուս մշակույթին իրազեկ դառնալու տեսակետից[2]։

Աշխատությունը բաղկացած է չորս հիմնական մասից։

Նախ ներկայացվում է ռուսերենի քերականության տեսական շարադրանքը։ Բերվում են ռուսերենի տառերի, նրանց արտասանության, բաժանման, շեշտի և ուղղագրության մասին անհրաժեշտ տեղեկություններ, տրվում են նորավարժ մանկանց ընթերցանության «դասեր», սեղմ նկարագրվում են ռուսերենի քերականական կարգերը, ձևակերպվում հաղորդակցման ընթացքում պաշտոնապես դիմելու («վերտառության») պատշաճ կաղապարները։ Առանձին ուշադրության առարկա են խոսքի մասերի ձևաբանական քննությունը, բառակազմական վերլուծությունը, այլև շարահյուսական («համաձայնության») դիտարկումները։ Աշխատության այդ մասն ավարտվում է քերականական կանոնների ընդհանուր կիրառմանը վերաբերող թարգմանական նմուշներով։ Դրանցում զետեղված են Ռուսաստանի պատմությանը և ռուս մշակույթին վերաբերող բնագրեր, որոնց կցվում են այս կամ այն նախադասությունը ռուսերեն թարգմանելուն օժանդակող բառեր և արտահայտություններ։

Աշխատության երկրորդ մասը պարունակում է ռուսերեն կառուցիկ տեքստեր, որոնց ակզբում նշվում է, թե դրանցից յուրաքանչյուրը քերականական ինչ կանոնի յուրացմանն է ծառայում։

Երրորդ մասն ունի զուտ գործնական բնույթ։ Ներառում է զուգադիր բնագրեր, որոնք այլ բան չեն, քան բարոյախոսական թեմաներով առակներ և ասացվածքներ, առասպելներ, «արժանիմաց» պատմություններ՝ համապատասխան քերականական-ուսուցողական ծանուցումներով, ռուսական տերության աշխարհագրության, տեղագրության մեկնություններ, կատակերգական բնույթի զրույցներ, վերջապես՝ ռուս հեղինակներից (Կարամզին, Դմիտրիև, Դերժավին, Լոմոնոսով) ծաղկաքաղ հատվածներ։

Աշխատության չորրորդ՝ ծավալով կարճառոտ մասում տրվում է ռուսերեն, լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն որոշ թվականների, դերանունների և եվ բայի ծագումնային ընդհանրության մասին հավաստող տախտակ, բերվում է հիմնականում լեզուների ցեղակցությամբ բացատրվող ռուսերեն և հայերեն բառերի ցանկ[3]։

---

1 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով. հ. 9 (լրացուցիչ), Երևան, 1959։

2 Դ. Բ. Ջահուկյան. Խ. Աբովյանը որպես լեզվաբան-քերականագետ.—ԵՊՀՊԱ, հ. 42, պր. 3, Երևան, 1953, էջ 47—105։

3 Տե՛ս նույն տեղում։

2. «Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն Հայոց» աշխատությունը գրված է ժամանակի գրաբարով, և այսօր այն ունի որոշակի արժեք նոր շրջանի գրաբարի պատմության ուսումնասիրության տեսակետից։

Աշխատությունը աչքի է ընկնում հայերենի բառակազմության, իմաստաբանության և, ընդհանրապես, բառապաշարի հարստացման ու կատարելագործման խնդիրներին վերաբերող առանձնահատկություններով։ Այն ուշագրավ է նաև հայերենի ձևաբանական և շարահյուսական իրողությունների, նոր շրջանում տեղի ունեցող բարբառային ներթափանցումների, գրաբարի ու գրական աշխարհաբարի փոխհարաբերության, նոր փոխառությունների և բառապատճենումների պատմության տեսակետից։

Այստեղ, սակայն, առանձին ուշադրության առարկա են բառապաշարի համադրական բաղադրությունները (բարդ և ածանցավոր բառեր)։ Վերջիններս քննության ենք առնում ըստ ժամանակային գործոնի, բառակազմական հիմունքի, իմաստային ոլորտի և կենսունակության աստիճանի։

3. Ըստ ժամանակային գործոնի առանձնացնում ենք հին և նոր բաղադրություններ՝ համեմատության առնելով առաջին հերթին գրաբարի կարևորագույն բառարանների ընձեռած տվյալները[4]։ Ըստ այդմ, աշխատության ողջ բառապաշարը բաժանվում է երկու մասի. ա) բառեր, որոնք հին են, գալիս են գրաբարի նախորդ փուլերից և արձանագրված են գրաբարի հիշյալ բառարաններում, բ) բառեր, որոնք բացակայում են գրաբարի բառարաններից և տվյալ դեպքում կարող են նոր շրջանի կազմություն լինել։ Նոր բաղադրությունները ժամանակագրության (կազմության ժամանակի) առումով միակերպ չեն և, իրենց հերթին, բաժանվում են չորս խմբի։

Առաջին խումբը ներկայացնում են այն նորակազմ բարդ և ածանցավոր բառերը, որոնք չկան ոչ միայն գրաբարի հիշյալ, այլև այդ շրջանում կազմըված երկլեզվյան, ինչպես նաև նոր հայերենի (դրական աշխարհաբարի) համեմատաբար ծավալուն և լայն տարածում գտած բառարաններում[5]։ Վերջիններս, ինչպես դիտենք, գրաբարի բառապաշարից բացի պարունակում են որոշակի հավելումներ, որոնք վերաբերում են նոր շրջանի լեզվական վիճակին։ Բառարանագիրները տարբեր մոտեցումներով դրանք ներմուծել են իրենց բառարանների մեջ[6]։ Առաջին խմբի բաղադրություններից են, օրինակ, **ազնուածուռն** *(179)*[7], **ածականակերպ** *(45)*, **անտառածն** *(271, 277)*, **դաշտագէտ** *(299)*, **եղեգնափայտ** *(78)*, **երկակետ** *(26)*[8] **երկաձայն** *(Ն. տ.)*[9], **զգօնամտութիւն** *(12)*, **թղթախաղաց** *(51, 53)*, **թշնամագործութիւն** *(179)*, **ծաղկացաւ** *(186)*, **կոկորդաձայն** *(23)*[10], **հրացանազարկ** *(174)*, **հրդեհարան** *(212)*, **նիւթա-**

---

[4] Տե՛ս Բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1—2, Վենետիկ, 1749—1769 (այսուհետև՝ ՀՀԲ)։ Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1—2, Վենետիկ, 1836—1837 (այսուհետև՝ ՆՀԲ)։ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի. II տպ., Վենետիկ, 1865 (այսուհետև՝ ԱԲ)։

[5] Հմմտ. Հ. Ա ւ գ ե ր ե ա ն. Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական. Վենետիկ, 1817 (այսուհետև՝ ԱՀՖԲ)։ Ն ո ւ յ ն ի՝ Բառարան հայերէն և անգղիական. Վենետիկ, 1825 (այսուհետև՝ ԱՀԱԲ)։ Մ. Ջ ա խ ջ ա խ ե ա ն. Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական. Վենետիկ, 1837 (այսուհետև՝ ՋՀԻԲ)։ Ս. Գ ա բ ա մ ա ճ յ ա ն. Նոր բառգիրք հայերեն լեզվի (պատկերազարդ). Կ. Պոլիս, 1910 (այսուհետև՝ ԳԲ)։ Հ. Դ ա ղ բ ա շ յ ա ն. Լիակատար բառարան հայերենից ռուսերեն. Թիֆլիս, 1911 (այսուհետև՝ ԴՀՌԲ)։

[6] Այդ մասին բառարանագիրները տալիս են որոշակի ծանուցում, աստղանիշով առանձնացնում դրանք։ Հմմտ. նաև Գ. Կ. Գ ա ս պ ա ր յ ա ն. Հայ բառարանագրության պատմություն. Երևան, 1968։

[7] Այսուհետև տվյալ բառին կից փակագծում նշում ենք Խ. Աբովյանի աշխատության համապատասխան էջ(եր)ը։

[8] Հմմտ. Հ. Զ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ս. Ա. Գ ա լս տ յ ա ն, Թ. Ա. Ղ ա ր ա գ յ ո ւ լ յ ա ն. Լեզվաբանական բառարան. Երևան, 1975 (այսուհետև՝ ԼԲ)։

[9] Նույն տեղում։

[10] Նույն տեղում։

բանութիւն (29), նորակիրք (222), շռայլուհի (156), ունկնօղի (54) և այլն։ Դրանք չկան նաև ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում[11]։ Իսկ սա նշանակում է, որ դրանք ոչ միայն իրոք նոր շրջանի նորակազմություն են, այլև դուրս են մնացել հայերենի բառապաշարի բոլոր կարգի բառարաններից՝ տվյալ երկի լեզվական տվյալները աչքաթող անհայտ պատճառով։

Երկրորդ խումբը կազմում են այն բառերը, որոնք առկա են տվյալ շրջանում կազմված երկլեզվյան, այլև գրական աշխարհաբարի բառամթերքն ընդգրկող հետագա բառարաններում։ Այսպես, օրինակ. ազնուազարմ (181), ազնուատոհմութիւն (179), անձնապահապան (179, 200, 216), դիւանատուն (216), զուարճաբանութիւն (209), ժամագործ (30), լրագրութիւն (27, 53), կայծակնաճարութիւն (136), հրապարակական (179), ձեռնափայտ (133), ձիադարման («ձիաբույժ». 187), նաւախումբ (165, 216, 217), շնորհատրութիւն (214) և նման բազում բառեր առկա են ԱՀՖԲ-ում (1817 թ.), ԱՀԱԲ-ում (1825 թ.) և մասնակիորեն անցել են հետագա բառարաններին։ Դա նշանակում է, որ այդ բառերը եղել են մինչև Աբովյանի աշխատության երևան գալը (1837 թ.)[12]։

Դրանք ըստ էության հայերենի զարգացման նոր շրջանում առաջացած նորակազմություն են։ Այսպես, օրինակ, արդեն հայտնի են թատրոնական (210), թնդանօթ (54), ճասարակապետութիւն (171, 272), ճրացան (129) նորակազմ բառերի հարաբերականորեն ստույգ ժամանակը և կիրառության աղբյուրը[13]։ Այնուհետև, փափադաւան (իմա՝ պապադաւան. 221), բառը գտնում ենք Գ. Մխլայիմի «Գիրք վիճաբանութեան» (1734 թ., էջ 17), իսկ թուաբանութիւն բառը՝ Ս. Աղամալյանի «Թուաբանութիւն» (1781 թ.) գրքերում։

Երրորդ խումբը կազմում են այն բաղադրությունները, որոնք առկա են տպագրությամբ Աբովյանի աշխատության ժամանակին համընկնող բառարաններում։ Նկատի ունենք հատկապես ՋՀԻԲ-ն, որով սկսվում է այդ կարգի բառերի բառարանագրական արձանագրումը. բանդարկութիւն (189), գերասխանչ (289)[14], թէական (38)[15], թիավարել (116), մանկաբարձութիւն (191), ոտնակոխել (96) և այլն։

Չորրորդ խումբը կազմում են այն բաղադրությունները, որոնք առկա են միայն հետագա բառարաններում՝ ամբողջովին կամ մասնակիորեն։ Այդպիսին են, օրինակ, աթոռանիստ (171, 215, 316), անեղատեսիլ (172), աղաճանf (299), անտառաբանութիւն (221), արազաձեռն (203), բուսարան (65), դեռաճաս (168), դրամաբանութիւն (53), երկրաշարժութիւն (132), ծխախոտ (105, 133), կրկնաձայն (26), մեծատոհմ (207), նաւաշինութիւն (181), նորաճասատ (180), ուրախարիթ (218) և այլն։

Ըստ այսմ, աշխատության բառապաշարի առանձնահատկությունների բացահայտումը գերազանցապես հիմնված է առաջին, երրորդ և չորրորդ խմբերին վերաբերող նոր բաղադրությունների վրա։

---

11 Տե՛ս Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան. հ. 1—4, Երևան, 1944 (այսուհետև՝ ՄԲԲ)։ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. հ. 1—4, Երևան, 1969—1980 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ)։ Է. Բ. Աղայան Արդի հայերենի բացատրական բառարան. I և II մասեր, Երևան, 1976 (այսուհետև՝ ԱԲԲ)։

12 Տե՛ս Պ. Սիմոնյան. Խ. Աբովյանի մի անտիպ քերականական աշխատանքի մասին.— ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 1։ Д. К. Джагацпанян. Лингвистические основы первых грамматических трудов по русскому языку для армян. Ереван, 1957, с. 135—136. Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 9, էջ 338։

13 Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան. XVIII—XIX դարերի գրաբար պատմագրության լեզվական բնութագիրը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 1, էջ 73—82։

14 ՋՀԻԲ-ն, ԳԲ-ն, ՄԲԲ-ն ունեն գերասխանչելի ձևով։

15 Սրան հոմանիշ է ստորադասական-ը, որ առաջինը կիրառում է Կղեմես Գալանոսը (տե՛ս ԼԲ, էջ 278)։

4. Համադրական բաղադրությունները վերլուծության համաժամանակյա կտրվածքում առկայանում են իբրև բարդ և ածանցավոր կազմություններ, որոնք արդյունք են Հայերենի բառակազմական ներքին օրենքների, այլև բառապատճենման որոշ սկզբունքների գործադրման։

ա) Նորակազմ բարդ բառերը ածանցավորների համեմատությամբ բավական շատ են։

Բարդ բառերի ներսում, իրենց հերթին, համեմատաբար մեծ թիվ են կազմում գոյականական հիմքերով և հոդակապով բաղադրությունները. անտառպետ (25), աշխարհակարգ (299, 301), առանձնասեռ (301), բրդագունդ (49), գետնամուկ (49), թաթասաւան (318), թղթադրամ (191, 197), խարանադրոշմ (211), խմբաձև (212), ծառաթոշուն (271, 277), ծովակատու (316), կարկաջասահան (165), կոհակամայր (270), յարգոյապատիւ (291), շքարանիք (303), շքարահաց (317), շղթայակամուրջ (215), շնամորթ (43), ոտնափայտ (133), սառցալեռն (213), սառցակուտակ (197), սատանակամուրջ (192), փիսյտագլուխ (316), փայտադեգ (136), փայտաթոշուն (47, 74), փայտածի (49), փայտսուռումբ (49), օձաձուկն (141) և այլն։

Ունենք գոյականական բաղադրիչներով հետևյալ անհոդակապ բարդ բառերը. այլազգական (23), բնկնօղի, այլև՝ ունկնօղի (=серьга. 43, 54), ծրծմայր, այլև ծծմայր (75, 54), կտուահատ (139)[16], հրագն (=свеча. 31), դայֆատուն (317) և այլն։

Առանձին խումբ են կազմում գոյականով և բայարմատով կամ բայհիմքով բաղադրված բարդ բառերը. աթոռանիստ (171, 215, 316), ակնաջախջախ (187), անտառաբնակ (25), դաշտաբնակ (ն. տ.), թելագործ (62), թելանիւս (303), թունագործ (171), ծառաբուդխ (ն. տ.), կանխածանոյց (198)[17], նագագմուռ (49), ձուլագործ (174), հրագահատ (46), յեղակարծուստ (289), նաւարկու (291), նշախառն (294), չքնաղանիւս (208), սրակիր (170), վայրկենացոյց (30), տոկոսախնդիր (153), ուսումնատ (132), քաթանավահատ (178) և այլն։

Ունենք ածականական և գոյականական բաղադրիչներով հետևյալ բաղադրությունները՝ հոդակապով կամ առանց հոդակապի. ագնուախոհ (194), աներատեսիլ (172), արագածեռն (203), արդարասիրտ (141), արժանայիշատակ (189, 221), բարեփոյթ (222), թեթևուտն (144), նարտարուեստ (174), մեծատոհմ (201)[18], ոսկեդրամ (293), չքնաղարուեստ (215), ուրախառիթ (218), քաղցրահրապոյր (193) և այլն։

Գոյականով և անորոշ դերբայով բաղադրված բարդ բառեր են՝ ասպատակահարել (207), գորովահարել (305), գրկափարել (317), մազառել (=щетка. 21), միշակերտել (202), մտաթափիլ (290), ոգեվառել (203), ոտնակոխել (96), վաճառարկել (52), վրէժխնդրել (102) և այլն[19]։

Կան նաև ածականով և բայարմատով բաղադրված բարդություններ. դառնասվէպ (183), դառնախոց (290), դեռահաս (168), երկարատես (178), նորապատրաստ (198), նորակիրթ (222), նորահաստատ (180) և այլն։

Բայարմատով և գոյականով են բաղադրված սողասառոյց (=гололед. 21) և վիժածնունդ (167) բարդությունները։

Նկատելի են նաև մասնակի դեպքեր, որոնցում բաղադրող հիմքը գոյական կամ մակբայ է, իսկ բաղադրվող հիմքը՝ գոյական, ածական, գերանուն կամ մակբայ. աստիյայսմ (205), հանդիպալեռն (221), շրջամասունք (219), պտղաստատ (200), սահմանամերձ (301) և այլն։

---

16 ՆՀԲ-ն ունի կտաւատ, իբրև՝ կտաւահատ։

17 ՆՀԲ-ն ունի՝ կանխածանօթ։

18 ՆՀԲ-ն ունի՝ մեծատոհմութիւն։

19 ՆՀԲ-ն ունի՝ մտաթափ, վրէժխնդիր, վրէժինդրութիւն, ԱՀՅԲ-ն և ԱՀԱԲ-ն՝ մտաթափ, մտաթափութիւն։

Ի տարբերություն պարզ հիմքերով բաղադրված վերը բերված բարդ բառերի, երբեմն նկատվում են բաղադրյալ հիմքերով կազմություններ։ Այսպես, օրինակ, հրացանարձակ (174) բառը տարժամանակորեն ներկայացնում է (հր-ա-ցան)-արձակ, իսկ տպագրատուն (26) և ամենարիւնահեղ (195) բառերը՝ ընդհակառակն, տպ-ա-(գր-ա-տուն) և ամեն-(արիւն-ա-հեղ) կազապարները։

բ) Ածանցավոր բառերը, անկախ հիմքերի պարզ կամ բաղադրյալ կազմություն ունենալու հանգամանքից, բաժանվում են երկու խմբի՝ նախածանցավոր և վերջածանցավոր։

Նախածանցավոր բաղադրություններում հանդես են գալիս ան–, գեր–, հար–, համ–, նախ–, ներ–, տար– նախածանց-նախամասնիկները. անակրնքարթ (295)[20], գերասմանչ (289), հարահասատ (197), համահաւասարել (22), համապատասխանել (ն. տ.), նախանաշ (317), ներմուծանել (19), տարածգիլ (84) և այլն։

Վերջածանցավոր բաղադրությունները հիմնականում գոյականներ են, որոնք բաղադրված են հատկապես –ութիւն, –ունի, –ական, մասամբ՝ այլ ածանցների օգնությամբ։ Սրանց բաղադրվող հիմքերը մեծ մասամբ բարդ կազմություն ունեն, որոնք եղած բառարանային տվյալների համեմատությամբ հիմնականում կիրառված են գրաբարի նախորդ փուլերում։ Լեզվի բառապաշարի համաժամանակյա կտրվածքում դրանք ածանցավոր բառեր են, պատմականորեն՝ բարդ ածանցավոր։ Համեմատաբար քիչ են պարզ հիմքերով բաղադրությունները։

Բավական արդյունավետ է –ութիւն ածանցը, որով բաղադրված գոյականները գերազանցապես արտահայտում են վերացական իմաստ։ Այդ կարգի բաղադրությունները կարելի է դիտարկել հետևյալ ներքին խմբավորմամբ՝ բառակազմական հիմքերի փոխառյալ լինելու, ինքնին գոյություն ունենալու, այլև զեղչված (էլիպտիկ) վիճակ ներկայացնելու տեսակետից։

1) Գոյականներ, որոնց բաղադրող հիմքը փոխառյալ բառ է. գեներալութիւն (155), ռիցարութիւն (294)։

2) Գոյականներ, որոնք կազմվում են ածանցավոր կամ բարդ հիմքերի մասնակցությամբ, սակայն վերջիններս, իբրև ինքնուրույն բառեր, կան գրաբարի նախորդ փուլերում. զգօնամտութիւն (12), հացագործութիւն (299), ճարտարագործութիւն (166), մանկաբարձութիւն (191), մանկահասակութիւն (188), շարառութիւն (295), պատգամաբերութիւն (203), պարապորդութիւն (47), սրամտութիւն (25, 287), վայրաբանութիւն (49), վերջաւորութիւն (92), փառահեղութիւն (172) և այլն։

3) Նորակազմ բառեր, որոնց բաղադրվող հիմքերը իբրև ինքնուրույն բառեր չկան գրաբարի նախորդ փուլերում, որ նշանակում է, թե դրանք բաղադրվում են կաղապարային համաբանության սկզբունքով. ասպատակահարութիւն (207), արիաջանութիւն (49, 219), արհեստագործութիւն (24), բառաստուգութիւն (23), բերդաբանութիւն (24), դրամաբանութիւն (53), թշնամագործութիւն (179), իշխանախնդրութիւն (ն. տ.), ծանօթագրութիւն (205), հոգետանջութիւն (212), նաւաշինութիւն (181), նիւթաբանութիւն (29), ջանահնարութիւն (212), սառնարիւնութիւն (34), վահստարկութիւն (166, 194), վնասահատութիւն (186, 203), օգտաշահութիւն (12) և այլն։

4) Երբեմն –ութիւն ածանցը բաղադրված է ենթակայական դերբայի հետ. մրսողութիւն (214)։

Բառակազմական որոշակի ակտիվություն է հանդես բերում –ունի ածանցը։ Դա բացատրվում է ռուսերենի իգականանիշ տարբեր կարգի մասնիկներին համարժեք մասնիկ զուգադրելու եզակի հնարավորության գործադրման հանգամանքով։ Նորակազմ ածանցավոր բառերի բաղադրող պարզական հիմքերը հիմնականում առկա են գրաբարի նախորդ փուլերում՝ իբրև բառաքերակա-

20 ՆՀԲ-ն ունի՝ ակնբարբ։

նորեն չտարբերակված միավորներ։ Կարելի է առանձնացնել -ուհի ածանցով բաղադրված նորակազմությունների հետևյալ մասնավոր խմբերը.

1) Ռուսերենից փոխառյալ բառի՝ իբրև բառակազմական պարզական հիմքի օգնությամբ բաղադրված բառեր. կապիտանուհի (156), օֆիցերուհի (Ն. տ.)։

2) Նորակազմություններ, որոնց զուգադիր են ռուսերեն իգականանիշ մասնիկով նշութավորված (արական սեռի) գոյականներ՝ գեղապետուհի (156), շոայլուհի (Ն. տ.), պաշտպանուհի (Ն. տ.), սնապաշտուհի (Ն. տ.), քաղաքացուհի (Ն. տ.) և այլն։

3) Նորակազմություններ, որոնց զուգադիր է ռուսերեն համապատասխան ձևը՝ նշութավորված իգականանիշ մասնիկներով. ազնուականուհի (=дворянка. 156), անիրաւուհի (=злодейка. Ն. տ.), առիւծուհի (=львица. 27), ատենադպրուհի (=секретарша. 156), բարերարուհի (=благодетельница. Ն. տ.), իշխանուհի (=графиня, այլև՝ герцогиня. 73—74, 156), դաստիարակուհի (=учительница. 160), դրացուհի (=соседка. 156), զօրականուհի (=солдатка. Ն. տ.), մշակուհի (=работница. 73), վաճառականուհի (=купчиха. 156), տիրուհի (=сударыня. 27) և այլն։

Զգալի թիվ են կազմում -ական վերջածանցով բաղադրությունները. իշխանապետական (56), լուտերական (209), մահմէտական (171), նահանգական (222), սրճական (161), ռիցարական (193) և այլն։

Ստորև բերում ենք այլ՝ -արան, -ացի, -եայ, -նի, -ոց, -ուն, -ուտ ածանցներով կազմված սակավաթիվ բաղադրություններ. արշաւարան (=манеж. 129), բուսարան (=оранжерея. 65), իրաւարան (194), հրդեհարան (212), տանջարան (178), սլաւենացի (84), եօթնաշտարակեայ (189)[21], պահապանոց (=будка. 153), ծալուն («փափուկ». 271), յեղակարծուտ (289) և այլն։

Ունենք երկու բառ, որ բաղադրված են -ած և -ել ձևակազմական-բառակազմական մասնիկների օգնությամբ[22]. թխուած (=пироженое. 294), քրքրել[23] (=грызать. 107)։

Բառապաշարի նորակազմությունները երբեմն առաջանում են բառակազմական արտաքին գործոնների ազդեցության պայմաններում։ Ինչպես հայերենում առհասարակ, այնպես էլ տվյալ աշխատության մեջ, նորակազմ բարդ և ածանցյալոր բառերի մի մասը արդյունք է բառապատճենման[24]։ Այստեղ գործ ունենք ռուսերեն և որոշ դեպքերում ռուսերենին անցած օտար բառերի պատճենման հետ, որը ներկայանում է երկու՝ բառային և բառակապակցական մակարդակներում։

Մի դեպքում բառապատճենումը տեղի է ունենում բառային մակարդակում, այսինքն՝ ռուսերեն տվյալ բառի դիմաց կազմվում է հայերեն նոր բառ. անտառարանութիւն (=лесоводство. 221), արդարասիրտ (=чистосердечие. 141), բանաստեղծուհի (=стихотворица. 91—92), բարեսրտութիւն (=добросердечие. 186—187), երկձայնք կամ կրկնաձայնք (=двугласные. 26), երկրաշարժութիւն (землетрясение. 132—133), ծխաքարշ (=трубочист. 105, այլև՝ трубка. 106, 160), նիւթաբանութիւն (=вещесловие. 29), սառնարիւնություն (=хладнокровие. 34), վայրաբանութիւն (=пус-

---

21 ԴՀՌԲ-ն ունի եօթնաշտարակեան, որ անցել է ՄԲԲ-ին, ԺՀԼԲԲ-ին և ԱԲԲ-ին։

22 Այս կարգի մասնիկների նման նշանակության մասին տե՛ս է. Բ. Աղայան. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1984, էջ 212—213։

23 Քրքրել բառը, հավանաբար, արդյունք է բարբառային ներթափանցման։

24 Այդ մասին տե՛ս է. Բ. Աղայան. Լեզվաբանության ներածություն. Երևան, 1967, էջ 290—291։ Л. П. Крысин. Иноязычные слова в современном русском языке. М., 1968.

тословне. 49), տարահաշումն (=летосчисление. 88), օրենսգիտութիւն (=юриспруденция, правоведение. 53. *հմմտ. լատ.* jurisprudentia), օրենսդու (законодатель. 160) *և այլն։*

Մյուս դեպքում ունենք ռուսերեն բառակապակցության պատճենում բարդ բառի միջոցով՝ արդյունքում ստանալով բառակապակցության դիմաց նորակազմ բարդ կամ ածանցավոր բառ։ Այս եղանակը նախորդի համեմատությամբ նվազ կիրառելի է. դեղնապղինձ (=зеленая медь. 47), շղթայակամուրջ (=цепной мост. 215), ոսկեխնձոր (=золотое яблоко. 61), պատկերատուն (=картинная галерея. 90), սառցատուն (=ледяной дом. 187—188), սատանակամուրջ (чертовый мост. 192—193), սրտատուն (=сердечное луплецо. 85) *և այլն։*

5. Բառապաշարի համադրական բաղադրությունները հանդես են գալիս իմաստային տարբեր ոլորտներում։ Այդ տեսակետից բառապաշարի նորակազմությունները բաժանվում են երկու խմբի։

ա) Դրանց մի մասը սովորական կիրառության բառեր են, որոնք իրականության զանազան երևույթների և դրանց հատկությունների մասին նոր պայմաններում առաջացած հասկացությունների անվանումներ են։ Այս իրողությունը, բնականաբար, վերաբերում է վերը բերված բառերին գրեթե հավասարապես։

բ) Մյուս մասը տերմիններ են։ Դրանք հիմնականում պետական-իրավական, ռազմական, գիտական-մշակութային և, վերջինիս ներսում, քերականական տերմինային համակարգերի մեջ մտնող նորակազմ միավորներ են՝ տերմինային նշանակության սերտությամբ կամ թույլ արտահայտվածությամբ. ազնուաժառանգ (179), անձնապահապան (=лейб-гвардия. 24)[25], անտառաբանութիւն (=лесоводство. 221), աստղադիտանոց (=обсерватория. 221), բերդաբանութիւն (=фортификация. 24. *հմմտ. լատ.* fortificatio), դրամաբանութիւն (53)[26], երկակետ (=двоеточие. 26), երկաձայնք (=двугласные. *Ն. տ.*), երկրաշարժութիւն (=землетрясение. 132), լեղուաձայն *(23. նկատի ունի ռուս.* ц-*ի արտասանությունը),* կալանատուն (=темница. *«բանտ». 205*), կոկորդաձայն *(23. նկատի ունի ռուս.* г, к, х, *բաղաձայնների արտասանությունը),* կրկնաձայնք (=двугласные. 26. *հոմանիշ՝* երկաձայնք *տերմինին*), հաշուաբանութիւն (=счисление. 85), մեծատոհմ (207), հացագործութիւն (=хлебопашество. 299). հրացանարձակ (=стрелец. 174—175), յունադաւան [—греческий (христианин). 62], նիւթաբանութիւն (=вещесловие. 29), շարունակաձայնք *(23—24. նկատի ունի ռուս.* л, м, н, р *ձայնորդները),* շնչաձայնք[27] *(23. նկատի ունի ռուս.* ж, ч, ш, щ *բաղաձայնները)*[28], պաշարասայլ (=подвоз. 203—204), պատկերատուն (=картинная галерея. 90), ռուսապատկան (183), վառոդահրոս (199), տպագրատուն (26) *և այլն։*

6. Բառապաշարի նոր համադրական բաղադրությունները ուշադրության առարկա են նաև իրենց կենսունակության տեսակետից։ Դրանք մեծ մասամբ հայերենի նոր շրջանում գործածական բառեր են։ Վերջիններս Աբովյանի աշխատության մեջ ստացել են իրենց գրավոր արտահայտությունը։ Իսկ սա նը-

---

25 ՆՀԲ-ն ունի՝ անձնապահ։

26 Դրամաբանութիւն *բառով նախադասությանը չի զուգակցված համապատասխան ռուսերենը, որը, հավանաբար, տպագրական բացթողում է։*

27 *Բառասկզբի շփական խուլ բաղաձայնի առաջընթաց առնմանումով շ-ն վերածվել է շ-ի, որը բացատրվում է խոսակցական արտասանության ազդեցությամբ։*

28 ԼԲ-ն չունի *այս տերմինը։*

շանակում է, որ բառապաշարի հարցում գրաբարը և գրական աշխարհաբարը ոչ թե հակադիր, այլ միասնական լեզվական տարբերակներ են։ Նորակազմ բառերի փոքր մասն է, որ արդյունք է հեղինակային բառակերտման։

Նոր համադրական բաղադրությունների կենսունակությունը բացահայտվում է նոր հայերենի բացատրական բառարանների տվյալների համեմատությամբ։ Ըստ այդմ դրանք բաժանվում են երեք խմբի։

1) Նորակազմ բառերի մի մասը գտնում ենք նոր բառարաններում։ (ՄԲԲ, ԺՀԼԲԲ, ԱԲԲ)։ Այս իրողությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով։ Մի կողմից, պարզվում է, որ այն նոր բաղադրությունները, որոնք չկան հետագա բառարաններում (օրինակ, ԳԲ, ԴՀՌԲ և այլն), բացակայում են նաև նոր բառարաններից (ՄԲԲ, ԺՀԼԲԲ, ԱԲԲ)։ Դա վերաբերում է հատկապես այն նորակազմություններին, որոնք ընդհանրապես չենք գտնում հետագա որևէ բառարանում (հմմտ. ստորև բերվող 3-րդ խումբը)։ Մյուս կողմից, այն նոր բաղադրությունները, որոնք այս կամ այն չափով տեղ են գտել հետագա բառարաններում, հիմնականում ավանդաբար անցնում են նաև նոր բառարաններին։ Նկատի ունենալով երկրորդ հանգամանքը, կարելի է առանձնացնել հետևյալ մասնավոր դեպքերը։

ա) Բառեր, որոնք կան ԴՀՌԲ-ում, և դրանք գտնում ենք նաև նոր բառարաններում. ապառանիստ, բանաստեղծուհի, բարեսրտութիւն, դաշտաբնակ, դաստիարակուհի, դեռահաս, երկրաշարժութիւն, ծծմայր[29], հանցագործութիւն, մահմետական, յարգոյապատիւ[30], յունադաւան, նահանգական, նորահաստատ, սանձարձակութիւն, տանջարան, ուրախառիթ, փառաճեղութիւն, օրէնստու[31] և այլն։ Այստեղ ուշագրավ է այն, որ, օրինակ, եօթնաշտարակեայ և թխուած բառերը հանդիպում են ԴՀՌԲ-ում եօթնաշտարակեան և թխուածք ձևերով, որպիսով ժառանգվում են նոր բառարանների կողմից[32]։

բ) Բառեր, որոնք, անկախ ԴՀՌԲ-ում գոյությունն ունենալուց, ԳԲ-ում դիտվում են իբրև նորակազմություն, և դրանք անցնում են նոր բառարաններին. արժանայիշատակ, թղթադրամ, միլիոնատէր, նախանաշ, ոտնակոխել[33], վերջակետ, տողագրատուն, օրէնսգիտութիւն և այլն։ Այստեղ ունենք լուտերական բառը, որը հետագա, այլև նոր բառարաններում հանդես է գալիս միօրինակ՝ լութերական գրությամբ։

գ) Բառեր, որոնք թեև բացակայում են հետագա բառարաններից, սակայն հանդիպում են նոր բառարաններում։ Այս դեպքում գործ ունենք կամ ոչ բառարանագրական ճանապարհով անցած կամ, որ քիչ հավանական է, երկրորդ անգամ կազմված բառերի հետ. ազնուապետութիւն, դառներես[34], դրացուհի, իշխանապետական[35], կոնակամայր, կրկնաձայն(f), համապատասխանել, մեղմաձայն, նաւաշինութիւն, ոսկեռամ, ոսկեխնձոր, պաշտպանուհի, պտղառատ[36], սահմանամերձ, սառցատուն, վճռահատութիւն[37], քաղաքացուհի և այլն։ Այստեղ ունենք նաև ներմուծանել և սառցալեռն բառերը, որոնք նոր բառարաններում, զարգացման առարկայական պատճառներով, նշվում են -ան կերպածանցից և -ն մասնիկից զերծ ձևերով։

2) Առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք թեև անցնում են հետագա, հատկապես նոր բառարանների մեծ մասին, սակայն ժամանակի ընթացքում, բառապաշարի զարգացման և կատարելագործման որոշակի գոր-

---

29 ՄԲԲ-ն ունի իբրև բարբառային բառ։

30 ԱԲԲ-ն ունի իբրև հնացած բառ։

31 ՄԲԲ-ն ունի իբրև մնացած, ընդ որում՝ հազվադեպ գործածված բառ։

32 ՄԲԲ-ն ունի եօթնաշտարակեան-ը իբրև մեռած բառ կամ նշանակություն։

33 ՄԲԲ-ն ունի իբրև մնացած, ընդ որում՝ հազվադեպ գործածված բառ։

34 ՄԲԲ-ն ունի իբրև մնացած, ընդ որում՝ հազվադեպ գործածված բառ։

35 ՄԲԲ-ն ունի նախորդի նման։

36 ՄԲԲ-ն ունի իբրև բարբառային բառ։

37 ՄԲԲ-ն ունի իբրև մեռած, ընդ որում՝ հազվադեպ գործածված բառ։

ծոններով պայմանավորված, ի հայտ են բերել կենսունակության տարբեր աստիճաններ: Ըստ այդմ, ՄԲԲ-ի, ԺՀԼԲԲ-ի և ԱԲԲ-ի համապատասխան փաստերի համադրումով գործնականում հնարավոր է առանձնացնել այդ կարգի բառերի վեց ենթախումբ:

ա) Բառեր, որոնք կան ՄԲԲ-ում և ԺՀԼԲԲ-ում, չկան ԱԲԲ-ում. մշակուհի, ծխաքարշ, բարերարուհի:

բ) Բառեր, որոնք կան ՄԲԲ-ում, չկան ԺՀԼԲԲ-ում, ԱԲԲ-ում. ազնուականուհի, զօրականուհի, պարապորդութիւն. վանաարկութիւն, վառոդահրոս:

գ) Բառեր, որոնք կան ՄԲԲ-ում և ԱԲԲ-ում, չկան ԺՀԼԲԲ-ում. դրամաբանութիւն, նաւարկու, յեղակարծուստ:

դ) Բառեր, որոնք չկան ՄԲԲ-ում, կան ԺՀԼԲԲ-ում և ԱԲԲ-ում. ազնուախոհ. արհեստագործութիւն, արշաւարան, գեներալութիւն, գրկափարել, եղեգնափայտ, թելագործ, թունագործ, իրաւարան, խարանադրոյմ, ծաղկացաւ, ծովակատու, կալանատուն, կաշառակուր (առնել), կոկորդաձայն, ձուլագործ, ճարտարագործութիւն, շաքարահաց, շղթայակամուրջ, ոտնափայտ, սրակիր, վայրկենացոյց, տարաձգել *և այլն: Այստեղ նշենք նաև* քրկրել *բառը, որը ԳԲ-ի և ԴՀՌԲ-ի նման տրվում է* քրքրել *ձևով:*

ե) Բառեր, որոնք չկան ՄԲԲ-ում և ԺՀԼԲԲ-ում, կան ԱԲԲ-ում. բուսարան, կապիտանուհի, ճարտարուեստ, ճրագահատ, մանկահասակութիւն, շնամարթ, շշնչաձայն, չարառութիւն, պատգամաբերութիւն, վայրաբանութիւն, օգտաշահութիւն *և այլն:*

զ) Բառեր, որոնք չկան ՄԲԲ-ում և ԱԲԲ-ում, կան ԺՀԼԲԲ-ում. բարեփոյթ, դեղնապղինձ, քաթանավաճառ *և այլն:*

3) Բավական մեծ թիվ են կազմում այն նոր բաղադրությունները, որոնք չկան ՄԲԲ-ում, ԺՀԼԲԲ-ում, ԱԲԲ-ում. ազնուաժառանգ, ակնաջախջախ, արիաջանութիւն[38], բղեշխուհի, բերղաբանութիւն, բրդագունդ, գետնամուկ, գիշերամէջ, գնդապետուհի, գորովահարել, դաշտագետ, դառնախոց, դառնավէպ, երկարատես, զգօնամտութիւն[39], ընկնօղի, թաթաւան, թելահիւս, թղթախաղաց, թշնամագործութիւն, իշխանախնդրութիւն, խմբաձև, ծալուն, ծառաբուլի, ծառաթռչուն, կանխածանօթ, կարկաջասահան, համահաւասարել, հանդիպալետոն, հաշուաբանութիւն, հացագմուռ, հարահաստատ, հոգետանջութիւն[40], հրազն, հրակործան (լինել), հրարկու, հրացանաձակ, հրեղհարան, մազառել, միջակետել, միջարքայական[41], մտաթափել, մրսողութիւն, նիւթաբանութիւն, նշախառն, նորակիրթ, նորապատրաստ, շաքարանիւթ, շողյունի, ջրջամասն, ոգեվառել, չքնաղահիւս, չքնաղարուեստ, պահապանոց, պաշարասայլ, պատկերատուն, ջանահնարութիւն, օրելոյզ, ռուսապատկան, սառցակուտակ[42], սատանակամուրջ, սլաւենացի, սնապաշտուհի, սողասառոյց, սրնակյան, սրտատուն, վաճառարկել, վրէժխնդիր, վիժածնունդ, տարահաշուումն, տոկոսախնդիր, րիցարական, րիցարութիւն, ցասմնաբարոյ, ունկնօղի (*հմմտ.* ընկնօղի), ուսումնառ, փայտագլուխ, փայտաղեգ, փայտաթռչուն, փայտածի, փայսառումբ, քաղցրահրապոյր, օֆիցերուհի, ֆրանցուզերեն *և այլն:*

Այս խմբում առանձնանում են նաև մի քանի քերականական տերմիններ, որոնք թեև այսօր ունեն պատմական նշանակություն, սակայն չկան ԼԲ-ում. ածականակերպ, բառաստուգութիւն (*հոմանիշ՝ ստուգաբանութիւն*), երկակետ, երկաձայն(ք), լեզուաձայն, շարունակաձայն:

Այսպիսով, Խ. Աբովյանի «Նոր տեսական և գործնական քերականության» բառապաշարի համադրական բաղադրությունների սեղմ քննությունը

38 *ՄԲԲ-ն, ԺՀԼԲԲ-ն ունեն* արիաջան:

39 *ՄԲԲ-ն ունի* զգօնամիտ:

40 *ՄԲԲ-ն, ԺՀԼԲԲ-ն ունեն* հոգետանջ:

41 *ՄԲԲ-ն ունի* միջարքայութիւն:

42 *ԺՀԼԲԲ-ն, ԱԲԲ-ն ունեն* սառցակուտակում:

ցույց է տալիս, որ նոր շրջանի հայերենը զարգանում և կատարելագործվում է ոչ միայն գործածող լեզվական տարրերակների առնչության, այլև առանձին հնդիսանների բառագործածության նպաստավոր պայմաններում։ Բառապաշարի նորակազմությունները, անկախ իրենց ծագմանակի, գործածության ոլորանների, բառակազմական սկզբունքների տարբերությունից, ուշագրավ են հայերենի պատմական բառագիտության և բառարանագրության տեսակետից, ինչպես նաև նոր գրական հայերենի բառապաշարի նոր պայմաններում տեղի ունեցող նորամշակման և կատարելագործման առումով։

СИНТЕТИЧЕСКОЕ СЛОВООБРАЗОВАНИЕ В «НОВОЙ ТЕОРЕТИЧЕСКОЙ И ПРАКТИЧЕСКОЙ ГРАММАТИКЕ» ХАЧАТУРА АБОВЯНА

В. Г. АМБАРЦУМЯН

Резюме

Новые слова, образованные синтетическим способом, являются неотъемлемой частью языка грамматического труда Хачатура Абовяна. Они анализируются нами во временном срезе, по словообразовательным способам и средствам, по их распределению в разных функциональных сферах и по жизнеспособности. Они не только интересны с точки зрения истории армянского языка, исторической лексикологии и лексикографии, но и необходимы для нормирования и усовершенствования армянского литературного языка на современном этапе его развития.